Հաղորդում

«Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 29-32-**րդ նիստերի վերաբերյալ**

(2014-2016**թթ**.)

2014-2016թթ. ժամանակահատվածում գումարվել է «Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) չորս նիստ, որոնց ընթացքում ի թիվս այլ հարցերի քննարկվել և համաձայնեցվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարին վերաբերող հիշատակման արժանի հետևյալ հարցերը.

1. ***<u>ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկի ռազմավարական վերլուծության իրականացման հետ կապված</u>*** – Հանձնաժողովը համակարգել է ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկի ռազմավարական վերլուծության իրականացումը, ինչպես նաև քննարկել և հավանության է արժանացրել «ՀՀ-ում 2010-2013թթ. ՓԼ/ԱՖ ազգային ռիսկերի գնահատման» հաշվետվությունը: Հաշվետվության հաստատումից հետո շահագրգիռ գերատեսչությունները կազմել և Հանձնաժողովի հաստատմանն են ներկայացրել ՓԼ/ԱՖ խոցելիությունները վերացնելու և ռիսկերին դիմակայելու տեսանկյունից արդյունավետության բարձրացմանն ուղղված գործողությունների ծրագիրը, որով սահմանված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ պարբերաբար հաշվետվություններ են տրամադրվում Հանձնաժողովին:

2. ***<u>ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման հետ կապված</u>*** – Հանձնաժողովը համակարգել է ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման հետ կապված շահագրգիռ գերատեսչությունների կողմից իրականացվող աշխատանքները, որի շրջանակներում Հանձնաժողովի մեկ նիստ նվիրվել է Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի քարտուղարության ներկայացուցիչների և գնահատող խմբի այլ անդամների հետ հանդիպմանը: Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Գնահատման հաշվետվություն) հաստատումից հետո Հանձնաժողովը քննարկել և հավանության է արժանացրել «ՀՀ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ վեր հանված խնդիրների լուծման միջոցառումների ծրագիրը», որով սահմանված միջոցառումների իրականացման ընթացքի և արդյունքների վերաբերյալ պարբերական տեղեկատվություն է տրամադրվում Հանձնաժողովին:

3. ***<u>«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում և հարակից մի շարք օրենքներում փոփոխությունների և լրացումների հետ կապված</u>*** – Հանձնաժողովը, հիմք ընդունելով «ՀՀ-ում 2010-2013թթ. ՓԼ/ԱՖ ազգային ռիսկերի գնահատման», ինչպես նաև Գնահատման հաշվետվությունը, քննարկել և հավանություն է տվել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախաձեռնությունը՝ կապված անշարժ գույքի ոլորտում կանխիկի շրջանառության սահմանափակման, զանգվածային ոչնչացման զենքի (այսուհետ՝ ՋՈՋ) տարածման հետ կապված անձանց պատկանող գույքի սառեցման պարտականության, ահաբեկչության ֆինանսավորման և ՋՈՋ տարածման հասկացությունները միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանեցնելու հետ: ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնին հանձնարարվել է փաթեթը լրամշակել և դնել պաշտոնական շրջանառության մեջ:

4. ***<u>Հանձնաժողովի կազմի, անվանման և գործառույթների ընդլայնման հետ կապված</u>*** **–** Հանձնաժողովը, հաշվի առնելով նոր իրավապահ մարմնի կազմավորումը, ինչպես նաև միջազգային զարգացումները՝ կապված ՋՈՋ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումների իրականացման հետ, քննարկել և հավանության է արժանացրել Հանձնաժողովի կազմի, անվանման, ինչպես նաև համակարգման ենթակա ոլորտների ընդլայնման նախաձեռնությունը: Արդյունքում Հանձնաժողովի կազմում ընդգրկվել են ՀՀ քննչական կոմիտեն՝ որպես քրեական գործերով նախաքննություն իրականացնող պետական մարմին, և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը՝ որպես ՀՀ-ում երկակի նշանակության ապրանքների, այդ թվում՝ ՋՈՋ տարածման տեսանկյունից զգայուն նյութերի, շրջանառության նկատմամբ հսկողություն իրականացնող լիազոր պետական մարմին:

5. ***<u>ՓԼ/ԱՖ և ՋՈՋ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ազգային ռազմավարության հետ կապված</u>*** – Հանձնաժողովն ի գիտություն է ընդունել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2014-2016թթ. ազգային ռազմավարությամբ» նախանշված նպատակների իրագործման արդյունքները և հաստատել է վերջինների հիման վրա կազմված «ՓԼ/ԱՖ, ինչպես նաև ՋՈՋ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի 2016-2018թթ. ազգային ռազմավարությունը»:

6. ***<u>Այլ հարցերից</u>*** կարևորվում են Հանձնաժողովին պարբերական տեղեկատվության տրամադրումը ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող տեղեկատվության անվտանգ փոխանակման նպատակով ստեղծված «Միասնական տեղեկատվական տիրույթ» համակարգի ներդրման և գործարկման ընթացքի, իրավապահ մարմինների և ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի միջև կնքված

փոխըմբռնման համաձայնագրերի վերակնքման, նոր համաձայնագրերի կնքման վերաբերյալ: